ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 4. Պետական տուրք վճարողների իրավունքները

Պետական տուրք վճարողներն իրավունք ունեն՝

- պահանջել պետական տուրք գանձող մարմնից՝ կատարելու տուրքի հաշվարկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վերահաշվարկ.
- վերադասության, ինչպես նաև դատական կարգով ~~գանգատարկել~~ «բողոքարկել» պետական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները.
- դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար.
- ստանալ պետական տուրքի վճարման մասին տեղեկանք.
- սույն օրենքով սահմանված դեպքերում պահանջել և ստանալ վերադարձման ենթակա պետական տուրքի գումարը:

Հոդված 7. Պետական տուրքի գանձման օբյեկտները

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝

ա) դատարան տրվող հայցադիմումների~~, դիմումների ու գանգատների~~ «ու դիմումների», դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

բ) ***(կետը հանվել է 28.12.98 ՀՕ-277)***

գ) նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու համար.

դ) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման վկայականներ տալու համար.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար.

զ) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

է) պետական գրանցման համար.

ը) մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար.

թ) գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

ժ) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ժա) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար.

ժբ) սույն օրենքի 14.2-րդ հոդվածով, 19-րդ հոդվածի 15.4-րդ ենթակետով, 19^1, 19^2, 19^4 և 20 հոդվածներով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար.

ժգ) օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար:

(7-րդ հոդվածը խմբ., փոփ. 28.12.98 ՀՕ-277, փոփ. 13.12.00 ՀՕ-123, խմբ. 02.05.01 ՀՕ-181, 12.06.02 ՀՕ-375-Ն, 28.11.07 ՀՕ-282-Ն, լրաց. 28.04.09 ՀՕ-108-Ն, փոփ. 29.04.10 ՀՕ-62-Ն, լրաց. 28.11.11 ՀՕ-282-Ն, 20.11.14 ՀՕ-167-Ն, 22.06.15 ՀՕ-83-Ն, 13.11.15 ՀՕ-124-Ն)

Հոդված 9. Դատարան տրվող հայցադիմումների~~, դիմումների ու գանգատների~~ *«ու դիմումների»*, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը.

(վերնագիրը փոփ. 28.11.07 ՀՕ-282-Ն)

Առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների~~, դիմումների ու գանգատների~~*«ու դիմումների»*, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1. հայցադիմումների և որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ գործին մասնակցելու մասին դիմումների համար՝

ա) գույքային պահանջով	հայցագնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի150 տոկոսից
բ) ոչ գույքային պահանջով	բազային տուրքի քառապատիկի չափով
2. իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար	բազային տուրքի 500-պատիկի չափով
3. քաղաքացիներին սնանկ ճանաչելու դիմումների համար	բազային տուրքի 100-պատիկի չափով
~~4. հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների՝~~	
~~ա) անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու համար~~	~~բազային տուրքի չափով~~
~~բ) *(ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*~~	
~~գ) *(ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*~~	

~~դ) *(ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)*~~	
~~ե) այլ դիմումների համար~~	~~բազային տուրքի եռապատիկի չափով~~
5. իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասինդիմումների համար	բազային տուրքի ~~կրկնապատիկի~~ «*տասնապատիկի*» չափով
«5.1 գույքը փիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումների համար՝	*բազային տուրքի տասնապատիկի չափով*
5.2. անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) վերաբերյալ դիմումների համար՝	*բազային տուրքի տասնապատիկի չափով*
5.3. քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դիմումների համար՝	*բազային տուրքի տասնապատիկի չափով*
5.4. երեխայի որդեգրման վերաբերյալ դիմումների համար՝	*բազային տուրքի տասնապատիկի չափով»:*
6. ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումների համար	բազային տուրքի չափով
«6.1. օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարում թույլատրելու վերաբերյալ դիմումների համար՝	*բազային տուրքի քառապատիկի չափով»:*
7. արբիտրաժային տրիբունալների վճիռների հարկադիր կատարման կատարողական թերթ տալու *«, ինչպես նաև արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ»* ~~մասին~~ դիմումների համար՝	բազային տուրքի քառապատիկի չափով
«7.1. ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, ինչպես նաև ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումների համար՝	*բազային տուրքի քառապատիկի չափով»:*
8. դատարանի դատական ակտերի դեմ	

վերաքննիչ բողոքների համար՝	
ա) գույքային պահանջի գործերով	վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցագնի 3 տոկոսի չափով
բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով	բազային տուրքիտասնապատիկի չափով
գ) հատուկ վարույթի գործերով	բազային տուրքի ութապատիկի չափով
9. դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար՝	
ա) գույքային պահանջի գործերով	հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքիտասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքիհազարապատիկից
բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով	բազային տուրքի 20-պատիկի չափով
գ) հատուկ վարույթի գործերով	բազային տուրքիտասնապատիկի չափով
10. ***(կետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***	
11. դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող ~~կողմերի~~ «*անձանց*» կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար	բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի ~~15~~ «1» տոկոսի չափով
12. գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործի քննությանը մասնակցող ~~կողմերի~~ «*անձանց*» կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար	բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի ~~10~~ «*1*» տոկոսի չափով
13. դատական նիստի համակարգչային	պատրաստված յուրաքանչյուր

ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար	կրիչի(կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազայինտուրքի չափով:

(9-րդ հոդվածը խմբ. 28.12.98 ՀՕ-277, խմբ., փոփ. 12.10.99 ՀՕ-4, փոփ. 13.12.00 ՀՕ-123, լրաց., փոփ. 11.09.01 ՀՕ-219, փոփ. 29.05.02 ՀՕ-358-Ն, լրաց. 07.07.05 ՀՕ-148-Ն, խմբ. 25.12.06 ՀՕ-60-Ն, փոփ. 28.11.07 ՀՕ-282-Ն)

Հոդված 22. Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները

Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

բ) հայցվորները՝ ալիմենտի գանձման վերաբերյալ հայցերով.

գ) հայցվորները՝ խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

դ) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի[ուղղ.] և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

ե) հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

զ) ***(ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***

է) հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով.

է.1) արդարացվածները՝ իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու և դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով.

է.2) արդարացվածները՝ նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում) վերականգնման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք աշխատանք (պաշտոն) ստանալու կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցման հայցերով.

է.3) արդարացվածները՝ ազատազրկման, կալանքի կամ ազատության սահմանափակման ձևով պատիժը կրելու, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժերի մեջ հաշվակցելու հայցերով.

է.4) արդարացվածները՝ նախկինում զբաղեցրած բնակելի տարածքը հետ ստանալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բնակմակերեսով և գտնվելու վայրով համարժեք բնակելի տարածք ստանալու հայցերով.

է.5) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3 հոդվածով նախատեսված դեպքերում խոշտանգման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով.

ը) ***(ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***

թ) ոչ առևտրային կազմակերպություններ և ֆիզիկական անձինք՝

- գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, վճիռների

կատարման եղանակը և կարգը փոփոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ հայցերով.

- երևան եկած նոր հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ ~~գանգատներով~~*«բողոքներով»*.
- դատարանների վճիռներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման վերաբերյալ հայցերով.
- դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև հարկադիր կատարողների գործողությունները ~~գանգատարկելու~~ *«բողոքարկելու»* վերաբերյալ դիմումներով.
- տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանների որոշումների դեմ ~~գանգատներով~~*«բողոքներով»*, դատարանների որոշումների դեմ մյուս ~~գանգատներով~~*«բողոքներով»*.
- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ ~~գանգատներով~~*«բողոքներով»*.
- մշակութային արժեքները ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

ժ) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով.

ժա) ***(ենթակետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***

ժբ) ***(ենթակետն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-27-Ն)***

ժգ) վճռաբեկ գանգատ տվող անձի կողմից դատավարության ընթացքում հանդես եկած դատավարության մասնակիցները և երրորդ անձինք՝ գանգատին միանալու վերաբերյալ հայցերով.

ժդ) դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով.

ժե) դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումներով.

ժզ) փախստականի կարգավիճակ հայցողները՝ փախստականի կարգավիճակ ստանալու մասին դիմումի մերժումը բողոքարկելու վերաբերյալ հայցերով և բողոքներով.

ժէ) փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ իրենց խախտված բնակարանային իրավունքները վերականգնելու վերաբերյալ հայցերով և բողոքներով.

ժը) հոգեբուժական հաստատությունները՝ քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով.

ժթ) դատական ակտերի հարկադիր կատարողները՝

- կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի վերանայման վերաբերյալ դիմումներով,
- օրենքով սահմանված դեպքերում պարտապանին անվճարունակ (սնանկ) ճանաչելու վերաբերյալ հայցադիմումներով.

ի) ժամանակավոր ադմինիստրացիայի (վարչակազմի) ղեկավարը և լուծարային կառավարիչը՝ «Բանկերի սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց խնդիրներն իրագործելու նպատակով ներկայացվող հայցերով.

իա) պարտապանը՝ սեփական անվճարունակությունը (սնանկությունը) ճանաչելու համար ներկայացվող հայցադիմումներով.

իա.1) սնանկության կառավարիչները՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

իբ) դիմողները՝ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով.

իգ) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր կողմից ներկայացվող հայցերով.

իդ) հայցվորները՝ պետական նպաստների, այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետականբանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման, գումարների բռնագանձման վերաբերյալ հայցերով:

Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Քրեական դատավարությունում հարուցված քաղաքացիական հայցի համար պետական տուրք չի գանձվում:

(մասն ուժը կորցրել է 07.04.09 ՀՕ-84-Ն)

(22-րդ հոդվածը փոփ., լրաց. 28.12.98 ՀՕ-277, 12.10.99 ՀՕ-4, 13.12.00 ՀՕ-123, լրաց. 06.11.01 ՀՕ-258, խմբ., լրաց. 07.07.05 ՀՕ-159-Ն, լրաց. 01.06.06 ՀՕ-116-Ն, փոփ. 28.11.07 ՀՕ-282-Ն, լրաց. 27.11.08 ՀՕ-220-Ն, փոփ. 07.04.09 ՀՕ-84-Ն, լրաց. 22.12.10 ՀՕ-15-Ն, 25.10.11 ՀՕ-265-Ն, 16.12.16 ՀՕ-243-Ն)

Հոդված 38. Պետական տուրքը վերադարձնելը

Պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝

ա) եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ.

բ) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձվելու կամ դրանց ընդունումը մերժվելու, ինչպես նաև նոտարի կողմից նոտարական գործողությունների կատարումը մերժվելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցումը և ուրիշ գործողությունների ու ծառայությունների կատարումը մերժվելու դեպքում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

գ) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը.

դ) եթե հայցի ենթադրական գինը, որից դատարանը գանձել են պետական տուրքը, գործի քննության ընթացքում ճշտվել է, որի հետևանքով պակասել է հայցի ընդհանուր գինը.

ե) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում.

զ) պետական տուրք գանձող պետական մարմնի կողմից այս կամ այն գործողության կատարումը մերժելու դեպքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ.

է) մինչև համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրք գանձող մարմնի կողմից, սահմանված կարգով, արդեն սկսվել է տնական բնույթ կրող համապատասխան գործողության կատարումը կամ ծառայության մատուցումը.

ը) անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության ակտի գրանցման փոխարեն[ուղղ.] մուծված պետական տուրքը, եթե գրանցումը չի կատարվել ամուսինների հաշտվելու կամ նրանցից որևէ մեկի չներկայանալու պատճառով.

թ) քաղաքացիական կացության ակտերը կամ նոտարական կարգով վավերացված պայմանագրերը, ժառանգության իրավունքի մասին վկայականները և այլ փաստաթղթերը դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում.

ժ) արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման հայտերով փորձաքննության կայացրած որոշումը բողոքարկման խորհրդի կամ դատարանի կողմից անվավեր ճանաչելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է փորձաքննության որոշումն ընդունումից հետո ի հայտ եկած նոր հանգամանքների հիմքերով.

ժա) Հայաստանի Հանրապետությունից մեկնելու փաստաթղթեր ստանալու համար քաղաքացիների վճարածպետական տուրքերը՝ մինչև մեկնելու թույլտվություն ստանալը արտասահման մեկնելուց հրաժարվելու դեպքում:

Սույն օրենքի 18 հոդվածով նախատեսված և վերադարձման ենթակա պետական տուրքի գումարները վճարողի կողմից, պետական տուրք գանձող մարմնի սահմանած կարգով, կարող են օգտագործվել նույն մարմնի կողմից այլ գործողություն կատարելու կամ ծառայություն մատուցելու համար, եթե վերադարձման ենթակա պետական տուրքիգումարները վճարված են այն հաշվին, որին վճարվում են տվյալ գործողության կատարման կամ ծառայության մատուցման համար սահմանված պետական տուրքի գումարները:

Հայաստանի Հանրապետության ~~քաղաքացիական դատավարության օրենսգրքի~~ *«քաղաքացիական դատավարության օրենսգրքով»* ~~233 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի~~ *«սահմանված վճռաբեկ բողոքի ձևը և բովանդակությունը չպահպանելու»* հիմքով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը վերադարձվելու կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 162 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվելու դեպքում պետականտուրքը, բայց ոչ ավելի, քան քսան հազար Հայաստանի Հանրապետության դրամ, չի վերադարձվում:

(38-րդ հոդվածը փոփ. 28.12.98 ՀՕ-277, խմբ., լրաց. 13.12.00 ՀՕ-123, լրաց. 29.05.02 ՀՕ-358-Ն, խմբ. 12.06.02 ՀՕ-375-Ն, 05.12.06 ՀՕ-255-Ն, խմբ., լրաց. 11.12.13 ՀՕ-130-Ն)